

ԱՐԱՐ ՄԱՍՈՒԼԸ ՆԵՐԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Հալեպ հրատարակվող «ԷԼ ՀԱՎԱՏԵՍ» ա-
րաբ օրաթերթը իր 1946 թ. փետրվարի 18-ի
թվով, Ներգաղթի արձանագրությանց առի-
թով փնտհատական հետևյալ ջերմ տողերը
կարձանագրե հայերու հասցեին։—

«Մեր թղթակիցը կտեղեկացնե, թե Սովետ
Հայաստան մեկնելու փափաքողներուն արձա-
նագրության գործը շատ կանոնավոր կեր-
պով առաջ կտարվի և թե ներգաղթի Կոմի-
տեի Հալեպի մասնաճյուղը իր անդամներեն
ոմանք ձեզիդեի և Նփրատի շրջանները
պիտի դրկե, հոն ևս արձանագրությանց
սկսելու համար։

«Այս առթիվ պիտի փափաքեինք այս երկ-
րին լիակատար գոհունակությունն ու գնա-
հատանքը արտահայտել արձանագրվողնե-
րուն և իրենց հոս մնացած կարճատև ժա-
մանկամիջոցին հայտնաբերած վարվելա-
կերպին համար։ Անոնք փաստեցին թե իս-
կական քաղաքացիներն են այս երկրին, որ
ջերմորեն ողջագութեց զիրենք և բնակատեղի
հայթայթեց իրենց։

«Անոնց մեկնումեն ետք, մեծ պակասը

պիտի զգանք անոնց արդյունաբերական
ձիրքերուն, որոնք այնքան մեծ դեր խաղա-
ցին մեր երկրին մեքենական արդյունաբե-
րության և ձեռային աշխատանքի գոր-
ծին մեջ։

«Բայց միաժամանակ շնք կրնար դեմ կե-
նալ իրենց առաջին հայրենիքին մեջ, իրենց
հայ եղբայրներուն հետ մեկտեղություն փա-
փաքին։

«Իրենց կմաղթենք ամեն երջանկություն
իրենց առաջին հայրենիքին մեջ, զանոնք
նկատելով տևական բարեկամության պատ-
գամավորները այս երկու ժողովուրդներուն
միջև, որոնք երկար ատեն պայքարեցան ի-
րենց գերիշխանություն, ազատության և
անկախության համար։

Սուրիացիներն ու սուրիական կառավա-
րությունը կհուսան ու սրտանց կմաղթեն,
որ իրագործվին հայերու հառաջադիմու-
թյան, մեծության և հողային ծավալումի
բաղձանքները։

(«Ժողովուրդի ձայն» մարտ 6 1946 թ.)

«ԷԼ ԱՅՐԱՄ» ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Եգիպտոսի «ԷԼ ԱՅՐԱՄ» թերթը կգրե։—

Հայ Ազգային Խորհուրդը՝ Լոնտոնի մեջ
գումարված Միացյալ Ազգերու Կազմակեր-
պության ուղղած է մանրամասն հուշագիր
մը որուն մեջ կպարզե Հայկական Դատին
ճարգացումը Առաջին Համաշխարհային Պա-
տերազմին վերջավորութենեն ի վեր, և
կմատնանջե Հայոց կրած նեղությունները
և ըրած զոհաբերությունը։

Հուշագրին մեջ ըսված է թե Ռուսական
ճակատին վրա կուվող Հայ զինվորը կար-
միր դրոշը Պերլինի վրա առաջին բարձրա-
ցողներեն՝ եղավ։ Մինչ ուրիշ Հայեր Ամերիկ-
յան Բանակին և դեռ ուրիշներ Ֆրանսական
Բանակին մեջ կուվեցան թշնամիին դեմ։

Հայ Ժողովուրդը իր Սովետական հայրե-
նիքին մեջ մեծ հառաջադիմություններ ար-
ձանագրեց գիտության, արվեստի, գրակա-
նության և ճարտարարվեստի բնագավառնե-
րուն մեջ։

Իսկ արտասահմանի մեջ ցրված բոլոր
Հայերը, որոնց թիվը մեկ ու կես միլիոնի
կհասնի, ջերմորեն կբաղձան իրենց երկիրը
վերադառնալ։ Սակայն Սովետ Հայաստանը
փոքր ըլլալով, չի կրնար բովանդակել ամ-

բողջ Հայ Ժողովուրդը։ Ուստի անհրաժեշտ
է, որ նախապես Հայերն բնակված շրջաննե-
րը Հայկական Պետության կցվին։

Հետո հուշագիրը մանրամասնորեն խոսե-
լե ետք նախապես Թուրքիո մեջ Հայոց ու-
նեցած վիճակին մասին, կպարզե Հայ Ժո-
ղովուրդին տեղահանությանմբ ստեղծված ներ-
կա կացությունը։ Հուշագիրը կշարունակե-
«Սովետական Հայաստան մասնակցեցալ
հաղթանակին իրագործման, ռազմաճակատ
հասցնելով 300.000 զինվոր, ավելի քան 50
զորավարներու հրամանատարության տակ
Կարմիր Բանակի շարքերուն մեջ։ Այս մար-
տիկներեն ավելի քան 32 հազարը իրենց
հերոսության համար պարգևատրված են և
անոնցմե ութսունը արժանացած են «Սովե-
տական Միության Հերոս»-ի տիտղոսին։

Խորհուրդը կեզրափակե իր հուշագիրը
ըսելով։

«Աշխարհի բոլոր Հայերը կպահանջեն, որ
արևելյան նահանգները Սովետ Հայաստա-
նին կցվեն։ Այս նահանգները ծաղկյալ Հայ
բնակչություն մը ունենին չորս հազար տա-
րի ի վեր՝ մինչև 1915»։

(«Լրաբեր» մարտ 6 1945 թ.)